

ԳՐԱԿԱՆ

ՄՕՆԹԸ

Հակառակ տարազին պարտադրանքին, բարեպաշտ մօնթը կը յամառեր ապրիլ երազը: Մատնիին փոխանակութիւնը, սիրոյ խոստովանութիւնը իրական էին իր ապրելուն չափ: Զղային գերագոյնը մէկ ապացոյցը ասոր: Տարօրինակը՝ անդնդային հնութիւնը իր հագուստներուն, ու սա կապոցին: Անոնք ունէին անուշ յիշատակ մը, որը հետզհետէ նեղիչ կը դառնար սակայն:

Ան ունէր հաւատք: Այսինքն գիտէր թէ բարի Աստուած մը կայ - զինքը ստեղծողը - գիտէր թէ առած էր Անոր պատուէրը, գիտէր նաեւ որ շուտով Անոր պիտի նուիրէր ինքզինքը: Բոլոր ասոնք կը թուէին շատ հեռաւոր յիշատակներ ըլլալ: Ասոնք իրեն կը մնային պայծառ կիրակի առաւօտէ մը - շատ նման այս օրուան - երբ սաղմոս մը մըմնջելով՝ քաղաքէն պատարագի գինին կը տանէր: Ան ի գուր կը փորձէր յիշել վերջին տողերը, որոնց հետ ինկած էին թելի տակ ծրարուած Սուրբ Գրքերը:

Հիմա սերը նեղիչ էր. մանաւանդ գարնանային այս արեւին: Զարմացաւ այլեւս օտար այդ կտորներու պնդեցողութեանը: Յարուցեալի մը անապարանքով պատռեց, մէկդի նետեց գանոնք: Գուռին մէջ փոքր ալիքներու վրայէն, հարիւրաւոր գիւղացիներ ժպտեցան իրեն: Անոնց հետ, ինք ալ ոլորեց թաւ պիտերը՝ ողջունելու արթնցող առնութիւնը:

Ան՝ հանդարտ կը փութէր իր ամէն մէկ ծալքին մէջ: Թանձր գագուտ մը հազարաւոր դուռներ կը խուժէր դէպի ներքին գգայարանները, երբեմն երբեմն իրրեւ ասղնտուք մը, երբեմն ալ՝ այրող

գետ մը: Կ'այրուէր մանաւանդ մատնեմատը:

Այրուածքին կսկիծը այնքան իրական էր որ կը փորձուէր համբուրել երազի մատնին:

Փոխուած էր նաեւ սիրտը: Զէր տեսած զինքը, բայց չիղերուն գծած պատկերը ունէր ամէն քան զինքը գերելու համար: Ներկան այդպէս անցեալ զգալը նոր էր իրեն, բայց տարիներու քնականութեամբ: Համբուրողները կը կանչէին զինքը խոր իր թմբիւնէն, աչքերը կը մշուշոտէին, հակառակ ննդուկներու խժտութիւն: Ինչ անհիծուած ըլլալու էին անոնք լեցնելու համար ամբողջ ծառը թեթեւ իրենց կեանքով, անիմաստ ու յիմար: Թեթեւ այդ կեանքը իր գլխուն մէջ կ'արձագանգէր ամենէն սպառիչ մտքերով, ու կազային ընդարձակումը այդ ձեւ ու տարագ չունեցող թրթռումներուն հրաբուխ մը կը դարձնէին իր գլուխը: Ականջի մեղմ բզբզիւնը կարաւանի մը զանգերուն համեմատութիւնը կ'առնէր, գերզգայուն լսելիքէ մը ներս:

Անցնող կարաւանը յիշեցուց իրենց ժողովրդական պարը: Յետոյ, երազին, համբուրողները դորդալից արշաւով մը անցան իր մօտէն, ամէն մէկը իր պատգամովը: Վերջինը ամենէն բարին երեւցած էր, քաղցր ու համոզիչ իր շեշտովը:

- Ո՛չ սպաննենք, ո՛չ ալ վիրաւորենք, թո՛ղ սիրահարուի:

Անապարող իր միտքը փրկիչ մը տեսած էր անոր մէջ: Ասպետական գէն ու գարդը կը պակսէին իրեն: Այս մանրամասնութիւնը ամուր փակած էր զինքը լիող ուժերուն, մոռնալու համար

միւսին արիւնակարմիր ձեռքը, այդ պահուն կորսուած լայն գօտիին մէջ: Վստահ էր որ չէր լսած որեւէ խօսք անոր քերնէն: "Սպաննեմ" եկած էր իր գէնքերէն: Այո՛, խօսողը անոնք էին, քանի որ ձիւնորին դաժան նայուածքին չափ սեղմ էր եւ քերանը:

Տժգոյն էր ինք. մարելիք ունեցած էր, երբ ան անցած էր իր մօտէն, շշուկի մը մէջէն սառնեցնելով իր արիւնը: Պատկերը հակառակ հազարաւոր կայծերուն, կը մթնցներ աչքերը: Ճմոռեց անպէտքացած այդ գործիքները քան մը վանելու անակութեամբ: Մորթին շփումէն սկսաւ գեղջուկ երգը, ու ամէն մէկ քառի երկարած գումով կը շինուէր գեղունիին: Ջորիին վրայ, պոռթկացող կոկոնի մը պէս, մօրը հսկողութեան տակ: Մա՞յր, այդ դիւային արարածը: Պիտի չընդունէր երբեք: Պառաւը ոչինչով տարբեր էր հեփիաթի իր սեռակցէն, ու ինք պատրաստ՝ իջեցնելու պատուհասիչ սուրը դաւաճանին գլխուն:

Ի՛նչ քնական՝ կտրելու ձեւը, թեւ ալ մնացած օտար կոչումին՝ տարագին: Սէրը նոյնքան նոր հիւր մըն էր, քայքայ ընտանեացած արդէն: Նոր մարդը, որուն առջեւ կը տժգունէր ամօթէն դողացող մօնքը - ձեւուած էր ըստ հնոյն - այն օրերէն մնացած երբ չկար սեւաւոր մօնքը - երիտասարդ, գեղեցիկ, անկարելիին հասնելու, գայն նուանելու զգացումէն կլանուած: Այդ էր պատճառը որ շարժումը եղած էր քունը:

Լայն թեւը զովութիւն մը տարածեց դէպի թաց ճակատը: Զգիտցաւ թէ հնոցը հոն էր թէ աւելի վարերը, միայն հաստատեց հետգհետէ տարածուող այրուցը: Բոցը, զինքը կծկելու տեղ, կը ստիպէր նետել ամէն քան, քացուելու համար: Փնտռեց դեւահալած աղօթք մը Նարեկէն: Նեղսիրտ՝ գոցեց կաշեպատ կողերը, որոնցմէ դուրս կը յամառէին սուրբին կշտամբալից աչքերը,

լեցուն ճենճեքումովը իր Հոգիին: Խուսափեցաւ սիրտ հալեցնող այդ նայուածքէն, որ իր վրայէն կ'անցնէր հեռուները կարծես "առ Տէր" կանչելու համար:

Ոչ, ան պիտի չառնէր զինքը: Տակաւին նոր սկսած էր իր կեանքին իմաստ մը հագցնել: Նուիրումը ասկէ ետքը միայն պիտի արժեւորուէր: Անոր կամքով միայն տեսած էր կեանքի այդ իմաստը, պիտի ջանար հասնել անոր "զի լցցի գիրն":

Երգելու, պոռալու տենչը կը լայննար դէպի մագերակները: Սկսաւ Աստուածածնի շարականներէն, նախ ամենէն աւելի վերացածն ու կտրուածը աշխարհէն: Զարմացաւ որ փախուստը կեղծ էր: Կեանքը յիշեցնող վանկերն իսկ, այրող ապրում մը ունէին, տարօրինակ համ մը, որուն դժուարանար անուն մը գտնել, թեւ ան թունդ գինիէ մը աւելի եռացնէր իր արիւնը:

Հօտէն տարուած քարակի մը նման անցաւ Երգ Երգոցի հարսի գովքերուն - որոնց մէջ հարիւրաւոր հարներ փռուած էին իբր մարմնացում ամենէն աւելի զօրաւոր քայքայ մերկ տարփանքի մը - յետոյ անցաւ իրեն այնքան սիրելի գեղջուկ տաղերուն, որոնց մէջ հարագատ ու մօտիկէն տեսնուած կեանք մը կը խաղար: Ինք անոնց լաւագոյն ունկնդիր մըն էր: Սատանայէն խաբուած պիտի ըսէր առաջ: Առանց ուզելուն եկաւ նոյն պատկերը: Այս անգամ ջատուկը զինուած էր նայուածքին ամենէն անմարդկայինովը, հակառակ ատոր, ան դիմացաւ պատկերներու գլխապտոյտ տողանցքին:

Նետեց հաստփոր ժամագիրք մը դէպի վիուկը: Ինքզինքը պաշտպանելու ձգտումը իր նուագագոյնիցն էր, մինչ անկէ ազատելու հրամայականը՝ քունը, պառաւը զգեստնելու տենչէն աւելի: Պէտք չունէր զօրաւոր այդ քանտարկեալներուն, անոնց ուղեկցութիւնը զգուսնէր իրեն, քանի որ իր նոր տէրը, աւելի հզօր էր՝

իրական ֆան բոլոր սուրբերը: Ու ինչքան խոր՝ ազդեցութիւնը դեռ նոր այդ տիրոջ, հեռաւոր, անծանօթ այդ սիրոյն:

Մատ մը թանձր այդ թուղթը կրնայ ուղղուիլ պառաւիւն: Անոր մետաղեայ զարդերը, մանաւանդ ոսկեզօծ խաչը, կրնան ֆաշել զայն վար: Այն ատեն պիտի անցնի անոր տեղը, ջորիին կոնակը: Շուտով պիտի վերականգնէ քարձումքները պակտող հայրենի բերդերէն մէկը, հարկաւ ամենէն մեծն ու ամմատչելին, ու աշխարհ մը գանձերու մէջ, դիմացը ամենէն թանկագինին, պիտի հնչէ իր անմահական երգը: Անոր սերն ու գեղեցկութիւնը, միացած իր երգին, պիտի անմահացնէին զինքը, ինչպէս անմահ էր ինքը՝ գեղուհին: Ափսոս հեռու էր ան, անծանօթ, ատով իսկ աւելի ազդու իր կրակը: Դաշնակիցներ փնտռեց շուրջը: Պատռուած զգեստը, լայն-լայն փռուած գիրքը, ամօթխած աղաչանք մը ունէին վերադարձի:

Ժպտեցաւ: Օրինակը վարակիչ էր: Գիրքը ատելի թշնամիի մը լեշն էր հիմա: Թեթեւութիւն մը կը հոսէր այդ տեսարանէն, պատռելով ամէն նկատում կապոցի միւս քանտարկեալներուն մասին: Զծռեցաւ զանոնք վերցնելու: Ուրի հարուած մը, կարծես շան մը դիակը մէկդի կ'ընէր ճամբէն, տարտղնեց գրքերը: Թեթեւ ճողփիւնը, յետոյ լողը լայն գուռին մէջ տերեւաթափի տխրութիւն մը բերին իր զգայարաններուն: Զհասկցաւ թէ ինչէն էր այդ: Միայն կը թուէր թէ մեծաստանը կը փլէր, ու ինք չէր կրնար փախիլ: Սեւ, պառաւցած սուրբերը տխուր կը նայէին իրեն: Անոնք ալ բանտուած էին փող պատերուն մէջ: Կու լային աշխարհի թէ իրենց անկարողութեան վրայ: Շատ չհետաքրքրուեցաւ:

Եւ Տիրամայր:

Աչքերը փնտռեցին խորանը: Կործանած աշտանակներուն վերելէն, անբացատրելի ժպիտը շրթունքին, կը

նայէր Ս. Կոյսը: Մանուկ Յիսուսի երջանկութիւնը անչափելի էր: Ինք կ'ուզէր որ անոնք ալ լային, նայուածով կշտամբէին գոնէ, իր ամբարիշտ ապերախտութիւնը, մինչ այդ անշեղ նայուածքները ներողամիտ գթութիւն մը ունէին, չես գիտեր որուն համար:

Տիրամօր աչքերը խաղաղութիւն մը ունէին հիմա, ժպիտը ոչինչ ունէր երկնային: Ո՞վ դրաւ հեփաթի աղջիկը այդ շրջանակին մէջ: Որքան պիտի ուզէր դարձը անապատական օրերուն, երբ սրտանց ֆաշուած խաչ մը, կը թաղէր քիւրաւոր փորձիչներ տաք աւազներուն մէջը:

Յիշեց վանքին կառուցման աւանդութիւնը, նկարչին սէրէն խաբուած տաղանդն ու մահը: Տէրը չէր այլեւս նայուածքին հետ իր շարժումներուն ալ: Աղջիկը կրնակալի կը հետեւէր իրեն, մէկ ձեռքով ֆամելով իր սիրտը: Նոր կը հասկնար Աստուածածնայ շարականները այդպէս բոցավառող սէրը, երկինքէն այնքան հեռու, որքան ինքը:

Ուխտին հաւատարիմ, սակայն իրեն նման այրող մըրկող արեղաները հալածուած ո՞վ գիտէ որ անհասանելի գեղեցկութենէն, նետած էին իրենց սիրագեղ, հոգին հալեցնող երգերը, բոլոր ժամանակի սատանաներուն ու անոնցմէ ամենէն մեծին՝ իբր կին մարմնացածի գլխուն: Անոնք եղած էին հալող իրենց սրտին ամենէն հատու զենքերը, պաշտպան՝ իրենց խղիկներու մահուր անդորրութեան:

Կրնա՞ր մնալ ինք այդ ահաւոր բարձրութեան վրայ, ու ողջակիզուէր իւր հմայիչ ձայնին ու քառերու դիւքանքին: Անոնք, տաղասացները, բարակ կրակի վրայ ճնճներելով, կապուած սակայն ուխտին թելովը, իրենց ընթոստացող հոգւոյն ու զգայարաններուն պարտադրած էին ամենէն մեծ յաղթանակը:

Ես չեմ ուխտած տակաւին:

Զիմացաւ ուրկէ, այդպէս հատու,

եկա վնիռը: Անոր առջեւ անհետացաւ ամէն ինչ: Լայնցող բացուածքին ընդմէջէն իր մասերը համարապար ժողովելով շինուեցաւ գեղուհին: Սեւով շրջանակուած անոր ըմբոստ նայուածքը մարտահրաւեր մըն էր, ուղղուած պառաւին: Զարմացաւ այս անգամ Տիրամօր նայուածքը հաստատելով անոր աչքերուն մէջ: Շուտով կարաւանին խառնուեցան միւս անդամներն ալ: Յետոյ վանք ու ւանքալ: Յետոյ կոիւ ու փախուստ: Յետոյ . . .

Զկրցաւ որոշել ոչ մէկը, աչքերը յառած տեսիլի պատին, ուր բազմած էր գեղուհին, վազեց զայն չկորսնցնելու մտահոգութենէն չարչրկուած: Բլուրին ետեւէն, զանգի մը ձայնը կեցուց զինքը: Միօրինակ քայց լեզուանի՝ կանչը կը խոռվէր երիտասարդը: Անշուշտ իր փընտռածն ալ կը դեկավարէր ձայներէն մէկը: Հոտոտեց հովը որ ձորին գովութիւնը քերաւ իրեն, տարօրինակ հեշտութիւն մը պատճառելով:

Փորձուեցաւ յիշել վանքին ղողանջը, իրիկնադէմին երբ երկինքը զարդարուիլ կը սկսէր: Այդ պահերուն սիրած էր դիտել դէմի հարթութիւնը, ուր բնութիւնը հազար ու մէկ շարժումներով բնանալու կը պատրաստուէր: Մէկ կողմէ կոպիտ ու վեհ բարձրութիւնը լեռներուն, միւս կողմէ լայնանիստ անդորրութիւնը դաշտերուն, սաղմոսին դողը կ'անցընէին իր երակներէն: Բնական ուժերու մեծութեան մէջէն ալ անլի ընդարձակ էր իր գոռոզ ոչնչութիւնը: Ահարկու այդ Տիրոջ ներկայութիւնը, միշտ ալ խուսափելու տրամադրութիւն մը արթնցուցած էր իրմէ ներս ու ձգած էր կէս իր այլապէս անուշ երգերը, ունկնդրելու համար հազար ու մէկ կրկնումներով զինքը պարուրող զանգիւնները: Քաղցրութիւնը, որ հոսած էր հայրենի զանգերուն լեզուէն, լեցուցած էր իր ալ հոգին: Ու միթէ կարելի էր մոռնալ ապառաժին թառած մեր փաղցրահայեաց վանքերը, այնքան

նման գեղջուկ մեր կղերին: Հիմա՞:

Մեղմ ելեւէջը մարտահրաւեր մըն էր ծծումաւոր վիուկէն:

Եկու՛ր թէ կրնաս, եկու՛ր թէ կրնաս:

Հեզմանք եւ սպառնալիք կար ձայնին մէջ: Բարկութենէն սեղմեց ակռաները: Հեշտ էր նեղել պառաւը, բռնելով ոտքերէն: Որքան պիտի նպաստէր այդ իր գործին: Ինք պիտի պայքարէր, եթէ պառաւը տեղով կրակ դառնար: Բայց ճիւղորին հրամա՞նք: Պիտի տանէր ամէն չարչարանք, պիտի հեզնէր զինքը բաժնել աշխատող փորձութիւնները, ու վստահ էր իր յաղթանակին: Գեղուհին մէն մի գիծը փաշալեքանքի աղբիւր մը եղած էր իրեն: Անոր սեւերէն խուսափող մանրամասնութիւնները անճանատութեան հրաւերներ էին իր բորբոքած ջիղերուն համար որ կը պարտադրէին ցնորքը իբր իրաւ: Տարածեց ձեռքերը գրկելու համար մօտեցողը ու մեծախօսելով իր սէրը՝ յառաջացաւ:

Վերը, մեծաւոր ծառէն պիտի կրնար ճշդիլ դիրքն ու նամբան, հոնկէ երկրորդ անգամ պիտի տեսնէր - երազը իրականութեան ջիղերով կը զգար իր պաշտելին: Զարմացաւ որ այդպէս կոչած էր մինչ այդ անծանօթ նոյնիսկ անմաքուր, կնան: Փոփոխութեան խորաչափումը շուարեցուց զինքը, մինչ վանքին ստուերը կը շարունակէր չարչարել բարեպաշտ երիտասարդը: Տեսական փուլզումի մը ցնցումները կը պահէին զինքը գերզգայուն, ու ջորիներու մեղմ զնգոցը ահազանգի մը համեմատութիւնը կ'առնէր այլեւս: Ի գուր փորձեց զայն մօտեցնել տօնական օրերու եօթնլեզուեան զանգիւններուն: Ճակատագրական ջորիէն խուսափելու տենջը կը վառէր զինքը, մինչ ներքին զգացում մը, նախապէս անծանօթ, կը գունաւորէր ամէն բան շլացուցիչ ուրախութեամբ: Ամէն բան այնպէս իրն էր, ու կը գուրգուրար վրան:

Գոցուած էին իր բոլոր զգայարանները, բանալու համար իր հոգին սա

կածանին վրայ: Անկէ պիտի անցներ աղջիկը: Այդ մտածումը կը սալարկէր նամբան. երկրային բոլոր գեղեցկութիւններով ու արժէքներով կը լեցներ զայն ծափ ու ծնծղայով, որոնց ընդմէջէն, նանանչի մը պէս շեշտակի, իրեն կ'երեւէր իր փնտռածը:

Նդածը Աստուծոյ կամփովն է:

Անծանօթ բերան մըն էր խօսողը իրմէ ներս: Թոյլ գտաւ փաստը: Տարիներով կրկնուած մտքեր զարկին նոյն թմրուկը. խլացուցիչ աղմուկով փորձեց դասաւորել զարկերը ու այս ամէնը հակառակ իր օրօրուող ֆալուածփին: Միթէ՞ մեղանչած էր: Ո՛չ, Աստուծմէ հեռացում մը չէր իր լիւմը: Նսասիրութիւնը խղիկին մէջն էր ու պէտք էր բանտել զայն հոն: Կտրուիլ աշխարհէ, չարչարել մարմինը հասնելու համար արքայութեան, նեղմիտ շահամուտութիւն մըն էր միայն: Ու դիրին: Դաժան բան է շրջապատուիլ իրական կեանքով ու հեռու մնալ անկէ, նոյն ատեն պայքարելով ապականութեան դէմ, որ կեանքի ջիղն իսկ է: Մինչեւ վիզը թաղուիլ մեղքի ծովուն մէջ հոնկէ հանելու համար ուրիշ մը, կ'արժէր հազար հատ նգնաւոր: Ու ընտանիքի բարի հայր մը լաւագոյնն է բոլոր ապրողներէն: Վկայ՝ ատոր: "Անեցէք եւ բազմացէք"ը:

Թող օրհնեալ ըլլայ Անոր կամքը: Պիտի ֆալէր մինչեւ հասնէր նպատակին, վստահ էր երկնային օգնութեան - ներքին ձայնը կը պոռար ատիկա, հակառակ վանքի փլատակներուն: Կե՞ղծ ուրեմն իր նուիրումը, խաւարին մէջ երկար հսկումները: Նդած էին օրեր երբ շատ գտած էր ֆանի մը ոսպը: Աստծոյ անհուն բարիքներուն դէմ ինքնագրկումը ոչինչ էր այն ատեն: Հիմա՞:

Նոր լոյսին տակ կ'արժեւորէր արեղաներու գոհաբերումը: Պէտք է հանել կեանքը իր դարաւոր ոչնչութենէն, արժէքներ դնել անոր մէջ, ու այդ արժէքները

իրենց լիութեան մէջ նուիրել Անոր, որմէ առած ենք ամէն բան: Առանց այդ դասաւորման անպէտք են մեծագոյն գոհաբերութիւններն ալ: Մնալ ուխտին բարձրութեանը վրայ ու գոհանալ՝ երգի կտուցով իջնել կեանքին: Վարք Սրբոց Հայոց . . .

Կտրեց մտքերու թելը, ընկճուած անոր երկարութեանէն: Չափազանց առաձգական այդ մտածումները, աւելի անկայուն կ'ըլլային իր մտքի թերի մշակումէն: Բայցբըր արագացուց սեղմելու համար խժտուիլը գանկին մէջ: Մութ կետերու պատը հիմա կ'իյնար կանաչ բլուրներու վրայ, որոնց մէջէն, ժայռներուն սեղմուած կը պահուէր կածանը: Ծառի շուփին պիտի տեսնէր ամէն բան չափազանց շփեղ շրջանակի մը ընդմէջէն:

Մէկ կողմը մեղմ զառիվարներով կը հեռանար դաշտը, գիւղերով կ'ետկիտուած, մէկէն բարձրանալու համար կապոյտ լեռներու: Միւս կողմը ծովն էր գրկուել լեռնային մթութեան: Փորձեց որոշել թէ որն էր աւելի կապոյտ երեքէն, թէն չէր ուզեր վեր նայիլ: Դաշտն ու ծովը աննպաստ էին հերոսական առեւանգումի մը: Որքան կը նախանձէր հէֆիաթի ձիաւորներուն, որոնց առջեւ որեւէ արգելք չէր դիմանար: Բայց ուր էր օգնականը իր մագերով կամ փետուրներով:

Անոնք առանց այդ երկրորդական դէմքերուն ոչինչ էին, շատ անգամ իրմէ աւելի անփորձ ու վատուած: Այ՛ն, շատ անգամ վատուած եւ վախկոտ: Ի՞նչ: Փառք Աստուծոյ: Ունենար ձի մը տակին, ու հրացան մը ուսին, այն ատեն ոչինչ էր կարաւանը ամբողջ հարահրոցովը: Ի գուր սպասեց ձայնին որ մեկնելէ առաջ պիտի ըսէր, "Երբ պէտք ունենաս, վառէ մագերէն մի՛ն":

Չյուսահատեցաւ սակայն: Ինք ալ ունէր իր զէնքը: Շատերը լալով երգած էին իր "Կախարդիչ աչքերը" երբ իմացած էին

իր մօճի տարագին մէջ բանտարկուիլը: Տօնախմբութիւններուն չէին քաշուած մինչեւ իրեն հասցնել "լուսաւոր իր դէմքին", "չիմար հասակին" գովերը: Ու ինք, հակառակ քիչ մը չափազանց ճգնողական անխնամութեան, դարձեալ մնացած էր շրջակայքին անմամը: Քանիցս հաստատած էր այդ աղբիւրներու վրայ թեթեւ - սատանան էր որ երգին հետ մտած էր ներսարդուզարդերէն ետքը: Ամենէն տպաւորիչը անոնցմէ վերջինը, երբ ինք ոտով գրգռել լեցուցած էր գուռին մէջ:

Ալիքները տարած էին իր մանրակարը ամէն կողմ: Կտրիճներու այդ բանակը չէր ունեցած նոյնիսկ ինքը՝ կարմիր սուրբը: Հակառակ տեսական անօթութեան - ծովեր յաճախադէպ էին իրեն համար - այդ պահուն ան Արտաւազդէն աւելի եռանդ կը զգար ու տարիներու բանտարկեալը արթնցած էր իր մէջը: Այդ պահուն ինք աւելի վճռական, ռազմունակ էր քան կարմիր Վարդանը ժամի պատին վրայ: Այդպէս ալ զօրավար: Թառամած ճգնաւոր մը, երկնահայեաց՝ ոչխարային դիմագծով, որուն ձեռքէն սուրը կ'իյնար, մինչ աւետարանը, ոտով գլխով կ'աճապարէր կորսուիլ հագուստներուն մէջ:

Ո՛չ, վնասականութիւնը պիտի չպակսէր իրեն: Ծծումաւոր պառա՞ւր: Ան ալ կրնար պոռչտուն հանդիսատես մը ըլլալ իր յաղթանակին: Պիտի կենար դէպ առաջ երկնցած սա քարին վրայ, եւ կարաւանին ճգնոցէն աւելի զօրաւոր սրտի զարկով մը պիտի հետեւէր անցնողներուն: Պիտի երգէր իր սէրը: Հիւսէր գովքը չորիի թանկագին քեռան: Լեռները պիտի արձագանգէին իր ձայնը, ու երբ քոյրը անծանօթ աշուղը մտիկ ընէին, ինք երգելով պիտի բռնէր կենդանիին չուանէն:

Այդ ատեն սէրը անշուշտ ամենէն սիրուն պատկերը պիտի շինէր իրմէ: Առնացի ու հօր, վստահ էր ասոր ու

հիմա մօրուին, պիտի մէն մի թելը - ձեռքը անդադար կը սրէր լայն պիտերը - մարտահրաւէր առնութեան մը կը պոռթկար:

Գեղուհին անկամ բանտարկեալ մըն էր - երագին մէջ լսած ու հաւատացած էր հիմա - ան ալ վառուած էր տղուն կրակովը, ու սիրով պիտի գար իրեն հետ: Երբ Աստուած միացուցած է սրտերը, ո՞վ է զանոնք բաժնողը: Միջոցը: Մարդի՞կը:

Քարէն դէպի ծառը, բլրան գագաթը, ոստում մըն էր իր թեւաւորուած ոտներուն համար: Կարաւա՞նը: Հարսնետրոններու բազմութիւն մը միայն: Ուրախ ձայներով լեցուած այդ միջոցը տարբեր պատկեր մը պիտի չարթնցնէր սիրող երիտասարդին մէջ:

Ջնգոցը հնչեղ հրաւէր մըն էր գանձին տիրանալու: Որոշ էին արդէն շարժող շրթներով ուղտերը: Օրօրուն ինչպէս պարող աղջիկներ, ինք ալ երգին կշռոյթովը կ'երերար, մէկ ձեռքը աչքին հովանի ըրած:

Տարագները պարսկական էին: Կարաւանագետը, երկար, հինաշուած մօրուքը հովուն՝ կ'երգէր լաւ օրերը, որոնք կրկնակի ուրախութիւն կը բերէին ձմեռուան բուք ու քորանէն ետքը: Ենշտուած հակադրութիւնները միշտ աւելի տպաւորիչ են, բռնակալ, ըլլան անոնք դաժան ու մահաբեր, քննուլ կամ կենսալից:

Իր սէրը: Մէկը այդ բազմադէմ հակասութիւններէն: Մինչ այդ լուռ, ինքնամփոփ ճգնաւորը ուրկէ՞ գտած էր նրբութիւնը տարիներով փորձուած վաւաշտոյին: Պիտի գտնէր պատասխանը եռացող իր ջիղերուն, եթէ լափած ըլլար եւրոպական պատուաստէն մեզի եկած գրականութիւնը: Զըրաւ պոռչտը պատ-նառներուն մէջ որոնք ըրած էին իր սէրը այնքան եզակի ու յեղաշրջած զինքը: Աստուծոյ կամքը անգամ մըն ալ ըրաւ շրջանը իր երակներէն, տալու համար

դեմքին աւելի յանդուգն ու պահանջկոտ դրոշմ մը:

Գրեթէ զգուեցաւ այդ տաղտկալի ելեւելէն որ ուղտի ոտով էր շինուած քան թէ մարդու ուղեղէ մը: Անցած էր այլեւս առաջին տպաւորութիւնը: Անապատին մէջ գրաւիչ այդ գլգուբը, անտեղի աղմուկ մըն էր հոս՝ հարուստ բնութեան ծոցը, ուր ամէն բան իր երգը ունէր, բոլորովին տարբեր իրարմէ, բայց որոնց միացումով կը ստեղծուէր սքանչելի դաշնաւորումը ազատութեան, նախնական ու անզուսպ, բայց աւելի հարազատ քան շատ մը կոկորդիլներէ ելած խեղաթիւրումները բնականին: Նոյնը կրցած էր հաստատել ծառին մօտէն երբ կը դիտէր շրջապատի կապոյտը:

Զհետաքրքրուեցաւ նամբորդներով: Զորէն դուրս ուղտերու մէկիկ-մէկիկ յայտնուիլը նոյնքան տաղտկալի էր որքան հագուստներու դէպ սա առաջնորդին երգը: Կ'ելլէին անոնք դանդաղ ու ինքնավստահ: Շարժուն իրենց նայուածքը կ'անցնէր ամէն բանի վրայէն, առանց թափանցելու շրջապատին: Զիրենք հետաքրքրողը թերեւս անգոյ աղմուկը ըլլար գայլերուն: Պայծառ սա առաւօտին դժուար թէ անոնք ելլէին որչերէն, երբ ամէն կողմ թշնամի կեանքը կ'եռայ: Ըրաւ այդ հաստատումները հակառակորդ մը պակաս տեսնողի գոհութեամբ: Ատկէ վերջէն էր որ բաժնեց ուղտերուն արհամարհոտ նայուածքը գէնքերու փայլովը հպարտ սա մարդոցը վրայ, որոնք պիշ-պիշ կը նայէին հագուագիւտ սա կերպարանքին:

Ոմանք բարեւեցին զինքն: մոռցաւ պատասխանը սովորական այդ բանաձեւին, աչքերը գամած ըլլալուն պարող սապատներուն: Անոնք չես գիտեր ինչ թեթեւութիւն մը ունէին որ կը վիրաւորէր զինքն: Ուրիշներ կրկնեցին գիշերուան հէքիաթէն հատուածներ տեսնել կարծելով հերոսներէն մէկը իրենց երեւակայութեան: Կենդանիները

տարին զիրենք այնքան արագ - աստ՞նք ալ իրենց տէրերուն երազը կ'ապրէին - որ չարութեամբ պատկերը անոնց աչքերէն մինչեւ յաջորդ իջեւանը:

Ինք չէր տեսներ անցնողները: Մութ շրջանակի մը ընդմէջէն լուսաւոր պարապ մը կար, որուն մէջ կ'երեւային գիծերը զինքն գերող աղջկան: Զուեցաւ սպասման յատուկ նեղսրտութիւնը, ու դաժանութիւնը ժամանակի երկարածքման: Իրմէ ներս անգիտակից կեանք մը կը փոթորկէր այնքան զգալի որ դժուարաւ կը գտէր մտածումը իրական ապրումէն:

Այ՛ո, չէր սխալեր: Ան էր: Սպիտակ ջորի մը կը խառնէր զինքն կարաւանին: Սեւին տակէն դիտմամբ փախչող գոյները աւելի ցայտուն էին կարմիր ծածկոցին վրայ: Երագինը տժգունեցաւ: Անոր ցնդումին ընդմէջէն ջորիին բռնը աւելի հրաշքոտ քաշողութեամբ տարածուեցաւ իր հոգւոյն մէջ: Հովը մէկդի ըրած էր - ինք աղջկան ձեռքը ըլլալուն համոզուած էր - թեթեւ ֆողը, ու լափող կարօտով լեցուն քիբերը, տոչորուն աղերսանքով մը միտուեցան իր սրտին:

Պիրկ ու անշարժ արեւածաղկի մը պէս դարձած մնաց դէպի լոյսը: Ներքին աշխատանքը տարիներու կեանք մը կը կանգնէր իր աչքերէն ու անդամներէն դուրս: Այդ կեանքը իրեն կ'արգիլէր ներկայ ամէն շարժում, տալով իրեն դիրք մը որ յարմար էր հնօրեայ ռազմիկի մը: Յաղթանակներով պսակուած գօրավարն էր ան՝ այդ պահուն ծնրադրած իր նշանածին առջեւ, որուն անունով ցուցադրուած էին իր լաւագոյն գագցումները, իբր փառքի ուղի:

Լաւ էր որ կրնար ապրիլ իր մտածումը այդքան խոր կերպով: Գերապրումի այդ վայրկեաններուն յաղթանակի կեցուածքէն տարբեր քան մըն ալ կար իր վրայ, որ աղաչաւոր բայց հրամայական կ'ընէր դարպասը անձկագին սպասուած

անճամատուութեան:

Պէտք է Օհաննէսը փախանայ ըլլայ:

Աղջիկը ծռած էր պառաւիւն վրայ, պրկուած ու հրամայող: Նայուածքը կը կտրէր թելը երկար պայքարին: Փոթորիկէն վերջը տարածուող խաղաղութիւնը նոր գրաւութիւններ դրաւ իր դէմքին ու շարժումներուն մէջը: Բուրումը, յետոյ կարմիր, հագիւ նշմարուող փաթաթը, կանչեցին տղան իրականին:

Պառաւիւն ընկնուած գլուխը մեղմ օրօրով ու դողացող իր շրթները դիտմամբ գաղտասուէէն քարճրացան հրնուանքի

տարագին:

Երբ Օհաննէսը դառնայ բանակէն՝ փախանայ պիտի ըլլայ:

Ու ատելութենէն նոր պարպուած աչքերը կը շարունակէին յամենալ ծռած մօնթին վրայ: Ան ըրաւ վերջին խոնարհութիւնն ալ ու, երբ ջորին կ'ընէր դարձուածքը, մատնին շրթներուն, առաւ դաշինքը կնքող համբոյրը: Յետոյ հրահանգները ստացած զինուորի մը պէս ուղղուեցաւ դէպի փողով:

Ա. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ԵՐԳԻԾԱԿԱՆԸ ԵՒ ՈՂԲԵՐԳԱԿԱՆԸ ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆԻ

«ԸՆԿԵՐ Բ. ՓԱՆՋՈՒՆԻ» ՎԷՊՈՒՄ

Գ.

Փանջունին ինչպէս նկատելի են նախորդները, փաղափկան դէմագոգի, դոգմատիկ ընկերվարականի, գրքերից, օտարածին խոնամփնթոր տեսութիւններից կեանք մտնող, միջավայր ու ժամանակ չը ֆանաչող կուսակցականի, սուտ յեղափոխականի ամէնից յաջողուած կերպարն է հայ գրականութեան մէջ: Նա ուղղակի շարունակութիւնն է, որոշ իմաստով "կատարելագործեալ" տիպն է այն յեղափոխութեան մակարոյթների, որոնց կերպարները այնքան հարտարօրէն կերտել էր Օտեանը համանուն պատմութեան ծաշար-վիպակում եւ "Պրոպագանդիստը" անուարտ վէպում: Այս կերպարը ստեղծելիս Օտեանը գործադրել է իր երգիծաբանական հանճարի լաւագոյն կողմերը, կերպարաստեղծման ռեալիստական միջոցներով երկնել անկրկնելիօրէն ինքնատիպ, տպաւորիչ եւ ամուռաց կերպար, ինչպէս Տարտաքենը, Հարպագոնը, Դոն Բիշոտը, Բաջարի Շվէյկը եւ Բաջ Նազարը: Տիպականութեան դասական

օրինակ է այն՝ անհատական-կոնկրետի եւ խտացուած ընդհանուրի զարմանալի միասնութեամբ: Խորապէս նշմարտացի, կենսականօրէն հաւաստի այդ կերպարը կերտուած է երգիծանքի տարբեր միջոցներով ու հնարանքներով:

Կերպարի ամբողջականութիւնն ապահովող նախադրեալներից մէկն այն է, որ Օտեանը Փանջունու կենսագրութիւնը ներկայացնում է ծննդեան օրից սկսեալ, նրա բնաւորութիւնը, գործունէութեան աղետաւոր հետեւանքները, հասարակական-փաղափկան իմաստով վտանգաւորութիւնը ցուցարում է նրա անին ու հասակին գուզընթաց: Ճիշտ է, մի՛ առիթով միայն Օտեանը Փանջունուն անուանում է "համակրելի հերոս", սակայն այդ էլ ուղղակի իմաստով ընդունելը կը յանգեցնի թիրիմացութիւնների: Հերոսի նկատմամբ հեղինակի հեգնական վերաբերմունքը երեւում է դեռ նրա անուանակոչութիւնից: Ինչպէս Օտեանի միւս հերոսների խօսուն անունները՝ Կուլտամեանց, Ինճէլտուրեանց,